ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆՆԱ ՄԱՐԱՏԻ

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՎԻՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. 01. 02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն»
մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Սուրեն Դավթի Դանիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Սամվել Պարգևի Մուրադյան**

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Նաիրա Վալերիկի Համբարձումյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի հունիսի 16-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. մայիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Մարգարյան Ս. Ա. Մարգարյան

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Զ. Եսայանը ստեղծագործել է հիմնականում 20-րդ դարի սկզբից մինչև 30-ական թվականները. ժամանակաշրջան, որը որոշիչ նշանակություն ունեցավ հայության կյանքում, անջնջելի հետք թողեց զգայուն հայ մտավորականի հոգում և յուրակերպ արտացոլանք ստացավ նրա ստեղծագործության մեջ: Անհատի հոգեկան խոր ապրումների ներկայացումը առաջնային համարող արձակագիրը լայն կտավի գործերում ուրույն տեղ հատկացրեց մտավորական կերպարների գեղարվեստական քննությանը:

«Ո՞վ է մտավորականը» հարցի շուրջ առկա են տարատեսակ, երբեմն՝ մեկը մյուսին հակադրվող կարծիքներ: Իսկ ո՞վ է Զ. Եսայանի վիպագրության մեջ պատկերված մտավորականը, ինչպե՞ս է սահմանվում մտավորականի ճշմարիտ և կեղծ լինելն ըստ 20-րդ դարի առաջադեմ գաղափարներ կրող հայ գրողի: Սույն ատենախոսությամբ փորձ է արվել բացահայտել վերոնշյալ հարցադրումների պատասխանները, Զ. Եսայանի վիպագրության մեջ («Սպասման սրահին մեջ», «Սկյուտարի վերջալույսներ», «Կեղծ հանճարներ», «Հլուները և ըմբոստները», «Շնորհքով մարդիկ», «Վերջին բաժակը», «Արգելք», «Հոգիս աքսորյալ», «Նահանջող ուժերը», «Սիլիհտարի պարտեզները», «Բարպա Խաչիկ») ցույց տալ մտավորականի եսայանական մոդելը՝ ընդլայնելու Եսայան գրողին ճանաչելու սահմանները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առարկան մտավորականության նկարագրերի գեղարվեստական քննության առանձնահատկությունների բացահայտումն է Զ. Եսայանի վիպագրության մեջ: Հետազոտության նպատակն է իրականացնել վիպագրության մեջ ներկայացված մտավորական կերպարների համակողմանի վերլուծություն: Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1.Պարզել վիպագրության մեջ արծարծված գեղարվեստական իրողությունների պատմական հիմքերը,

2.ուսումնասիրել Զ. Եսայանի հայացքների ձևավորման և զարգացման ճանապարհը՝ հիմնվելով ինչպես ստեղծագործություններում պատկերված մտավորականների կերպարների ուսումնասիրման, այնպես էլ գրողի հրապարակախոսական հոդվածներում արծարծված որոշակի դիտարկումների, նամակների վրա,

3.անդրադառնալ Զ. Եսայանի վիպագրության մեջ մտավորական կերպարների համակողմանի ուսումնասիրմանը,

4.ճշգրտել մտավորական-միջավայր փոխառնչությունների շուրջ Զապել Եսայանի դիտարկումները,

5.տեսանելի դարձնել գրողի ստեղծագործության մեջ ներկայացված հարցադրումների ու դիտարկումների արդիականությունը,

6.նոր կողմերով բացահայտել Զ. Եսայանին, նրա ներաշխարհն ու հայրենասեր մտավորականի նկարագիրը:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Եսայանի ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրությունները հիմնականում տպագրվել են մամուլում, վերլուծություններ կան որոշ գրքերի առաջաբաններում, վերջաբաններում

Դեռևս Հ. Եսայանի ստեղծագործելու տարիներին անտարբեր չէր նրա անձի ու գործի նկատմամբ գրական հանրությունը: Ուշագրավ են Ա. Հարությունյանի, Օ. Չիֆթե-Սարաֆի արձագանքները. նրանք բարձր են գնահատում Հ. Եսայանի ստեղծագործությունն ու գրամշակութային գործունեությունը:

Գրողի ստեղծագործությանն անդրադարձել են Հ. Օշականը, Ս. Արզումանյանը, Վ. Նորենցը, Հ. Թամրազյանը, Շ. Տասնապետյանը, Ս. Գրիգորյանը, Գ. Պըլտյանը, Մ. Նշանյանը, Պ. Սնապյանը, Գ. Հակոբյանը, Ա. Մակարյանը և այլք: Համեմատաբար համակողմանի ուսումնասիրություն է Ս. Արզումանյանի 1965 թ. տպագրած «Հապել Եսայան (կյանքը և գործը)» մենագրությունը: Չնայած խորհրդային գրականգիտությանը հատուկ կողմնորոշիչ դրույթների առկայությանը՝ այն Եսայանի մասին գրված միակ ամբողջական ուսումնասիրությունն է, ուր պատկերվում է Եսայան գրողի կայացման ուղին:

Առաջադիր թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նվիրված է Հ. Եսայանի վիպագրության մեջ պատկերված մտավորական կերպարների նորովի ուսումնասիրմանը: Գրողի վիպագրության մեջ հարուստ ներաշխարհ ունեցող որոշ կերպարներ դուրս մնալով գրականագետների դիտակետից՝ իրենց մեջ պահել են գրողի կողմից ընթերցողին հասցեագրված մի շարք էական գաղափարներ և արժանի են համակողմանի, առանձին քննության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Սույն ուսումնասիրությամբ Հ. Եսայանի վիպագրության մեջ մտավորականության քննության թեման դառնում է առանձին հետազոտության առարկա: Այս կերպ ընդլայնվում են գրողի արձակի քննության սահմանները. վեպերում ու վիպակներում պատկերված մտավորական կերպարները հետազոտվում են ոչ միայն տվյալ քաղաքական իրադարձությունների ներկայացմանը զուգընթաց, այլ նաև գրողի աշխարհընկալման առանձնահատկությունների հանրանկարում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրության մեթոդաբանությունը ընտրել ենք՝ ելնելով առաջադիր նպատակից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «մեթոդը պետք է նպաստի նյութի վերլուծությանը՝ հիմնված գիտական տեքստի վրա, այլ ոչ թե գրական տեքստը հարմարեցվի (подгонка) տեսությանը կամ ինչ-որ կաղապարի» [1] :

[1] Սիմյան Տ., Գրականագիտության «գործարանը». մեթոդ, տեքստ, ընթերցող, մեկնաբանող (Ուսումնամեթոդական ձեռնարկ), Եր., հեղ. հրատ., 2015, էջ 21:

Ատենախոսության մեջ կիրառվել են մի շարք մեթոդներ՝ վերացարկման, վերլուծական, համադրման, համեմատական և այլն: Առանցքային ենք համարել նաև Զ. Եսայանի կենսագրությանն անդրադարձը, առանց որի հնարավոր չէ ըմբռնել նրա գրողական աշխարհայացքը, գտնել կողմնորոշումների ակունքները:

Ատենախոսության տիրույթում հանգամանալից անդրադարձել ենք գրականագետների՝ թեմային առնչվող հիմնային դրույթներին ու գրականագիտական ուսումնասիրությունների արժեքավոր հենքերի վրա փորձել առաջ քաշել հարցերի վերաբերյալ սեփական դիտարկումներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել հատուկ դասընթացների շրջանակներում, օգտակար լինել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման համար, Զ. Եսայանի գործերի վերահրատարակումների ժամանակ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

Աշխատանքի դրույթները հրապարակվել են ԲՈԿ-ի կողմից ճանաչված պարբերականներում, ներկայացվել հանրապետական, միջազգային գիտաժողովների: 2021 թվականին «Զապել Եսայանի վիպագրությունը նորօրյա գնահատմամբ» ուսումնասիրությունը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված «100 գաղափար Հայաստանի համար» նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների մրցույթին՝ անցնելով եզրափակիչ փուլ: Հանձնաժողովի անդամներին ներկայացրել ենք մեր ուսումնասիրության մի շարք հիմնադրույթներ, հաշվի առել արժեքավոր դիտարկումները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության գլուխներում փորձել ենք հնարավորության սահմաններում պահել ժամանակագրական հաջորդականությունը, սակայն միաժամանակ առանցքային ենք համարել թեմատիկ բաժանումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորել ենք թեմայի ընտրությունը, ցույց տվել նյութի մշակվածության աստիճանը, ներկայացրել արդիականությունն ու գործնական

նշանակությունը, առանձնացրել ատենախոսության նպատակն ու խնդիրները, տեսական-մեթոդական հիմքերը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՈՒՍԱՆՈՂ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Այս գլխում անդրադարձել ենք «Սպասման սրահին մեջ» և «Կեղծ հանճարներ» վեպերին, մասնավորապես՝ 20-րդ դարասկզբի ուսանող մտավորականության գեղարվեստական նկարագրերի ուսումնասիրմանը, գրական զուգահեռներ տարել գրողի ինչպես տարաթեմա հոդվածների, այնպես էլ փոքր կտավի գործերում պատկերված ուսանողների կերպարների հետ:

Գրողի անդրանիկ վեպում («Սպասման սրահին մեջ») ուսումնասիրել ենք օտար ափերում իրենց երազանքի ետևից գնացած ուսանողության նկարագրերը: Զ. Եսայանը և՛ գեղարվեստական գործերում, և՛ հոդվածներում կարևորել է կրթության դերն անհատի կյանքում, դրանից բխեցրել միջավայրի վրա նրա թողած բարերար ազդեցությունը: Հարցի մյուս կողմն էր արդեն՝ ինչպիսի՞ հանգրվան էր ունենում ուղին անհատների, որոնք գնում էին իրենց երազանքի ճանապարհով:

1902 թ. գիտելիքների մեծ պաշարով Փարիզից Պոլիս վերադարձած Եսայանը ուսանողների փարիզյան կյանքից վերցված պատկերներում, մասնավորապես «Սպասման սրահին մեջ» վեպում ներկայացրեց շրջապատի անտարբերությունն ու կեղծ մտահոգվածությունը դեպի մարդը: Ծանրության կշիռն ուղղեց դեպի մտավորականությունը, իսկ իրադրությունները դիտարկեց երկու կողմից՝ մի տեղ սալոնային միջավայրն է, որտեղ հաճախ զուտ քննության առարկա է շրջապատող մարդկանց ծանր կացությունը, մյուս կողմում՝ դաժան կյանքի արժանացած զարգացածության տարբեր մակարդակ ունեցող մարդիկ: Չնայած վեպում գործողությունները երկրորդվում են կերպարների հոգեհուզական ապրումների ներկայացմանը՝ այն արտահայտում է ժամանակի համար կենսական բովանդակություն. շատերն էին գնում Ֆրանսիա՝ համալսարանական կրթություն ստանալու, բայց չէին ըմբռնում՝ ինչ խոչընդոտներ կան, ինչ ճանապարհով են ստանում իրենց կրթությունը, երբեմն վերադառնում, երբեմն էլ՝ կյանքի գնով հատուցում երազանքին:

Փարիզյան միջավայրում արծարծված խնդիրները նոր թարմությամբ ներկայացվեցին «Կեղծ հանճարներ» վեպում[2], որը նշանակալի էր Զ. Եսայանի գրական ժառանգության մեջ: Այստեղ առավել խոր երևացին կերպարակերտման արվեստն ու աշխարհայացքը:

Այստեղ արդեն ներկայացվում է հայ ուսանողության կյանքը: Պատկերած ուսանողներից ոմանց նպատակը կատարելագործվելն էր ընտրած ուղղության մեջ, սակայն նրանց կողքին էին ամեն գնով փառքի տիրանալու բուռն ցանկություն ունեցողները. պետք էր ահազանգել՝ վտանգված է հայ ուսանողության ապագան, դժվարին՝ հաջողության հասնելն անհավասար պայքարում, և հատկապես՝ օտարության մեջ, առանց որևէ աջակցության:

---

[2] Վեպը հատվածաբար տպագրվել է 1905-1907 թթ. «Արևելյան մամուլի» էջերում, Կ.Պոլսում առանձին գրքով հրատարկվել 1910թ., 2019թ. վերատպվել է «Արաս» հրատարակչության կողմից Գր. Պըլտյանի վերջաբանով:

«Կեղծ հանճարներ» վեպում անդրադարձել ենք Փարիզում հայտնված հայ ուսանողության քննությանը, ցույց տվել նրանց՝ նախևառաջ կերպար լինելու հանգամանքը՝ միաժամանակ դիտակետում պահելով կերպար-նախատիպ (Տաճատ Չարըքյան-Տիրան Չրաքյան[3], Սուրեն Սահակյան-Սուրեն Պարթևյան[4], Անտոն Յարայան-Սիամանթո, Հրանդ Մարտիկյան-Արշակ Չոպանյան, Վահե Սապահյան-Վահրամ Սվաճյան) աղերսները:

Վեպն ունեցավ մեկը մյուսին հավելող, երբեմն նաև հակասող մեկնաբանություններ: Ակնհայտ էր կերպարների նմանությունը 20-րդ դարասկզբի որոշ հայ մտավորականների հետ: Ոմանք Զ. Եսայանի ստեղծագործության մեջ բռնեցին դարասկզբի հայ մտավորականներին անհատականացնելու ուղին, անգամ զրպարտանքներ որոնեցին խոսքերում: Ն. Սարաֆյանի կողմից վեպն անգամ բնորոշվեց «մոռցուած թշուառութիւն մը»[5]: Զ. Եսայանն աղջկան՝ Սոֆի Եսայանին ուղղված նամակներից մեկում գրել է. «...Ես մարդկանց դիտում ու դատում եմ վիպասանի դիրքերից, և չպետք է ինձնից նեղանալ, եթե խտացնելով եմ պատկերում նրանց բնորոշ գծերը»[6]: Ուստի չպետք է մեղադրել գրողին որևէ հայ մտավորականի ծաղրելու մեջ. չէ՞ որ վիպասանի վարպետ գրչով խտացված հատկանիշների կրող կերպարներն անվերապահորեն չեն նույնանում իրենց նախատիպերի հետ, այլ փոխանցում են աշխարհայացք, տրամադրություններ, իրականության գեղարվեստական պատկերման հնարների յուրահատուկ համակարգ:

---

[3] Առկա ուսումնասիրությունների կենտրոնում Տաճատ Չարըքյանի կերպարն է, նրա առնչությունները Ինտրայի հետ: Տիրան Չրաքյանն ինքը իր նախատիպ լինելու հանգամանքին բավական բուռն արձագանքել է նամակներից մեկում (Տե՛ս՝ «Նայիրի», Պէյրութ, 1964, 1 Մարտ, թիւ 41, էջ 4-5): Նամակն արժանացել է տարբեր գնահատականների: Դիպուկ և ճշմարտացի է Մ. Նշանյանի դիտարկումը. «Այո, սոսկալի նամակ մըն է, ու ծայրէ ծայր լկտի: Զանց կ'առնեմ կնոջ մը անունին ուղղուած այդ շլխտիութիւնները» (Նշանեան Մ., Պատկեր, պատում, պատմութիւն / Մրցակցութիւններ, հատոր 2, Երեւան, «Ակտուալ Արուեստ», «Յովհաննիսեան» ինստիտուտ, 2016, էջ 121), հիշատակելի են նաև Պ. Սնապյանի և Գր. Պըլտյանի գնահատականները: Վերջինիս համար «Չրաքեանի հակազդեցութիւնը որոշ չափով հասկանալի է» (Պըլտեան Գր., Կեղծումին վէպը, Վերջաբան՝ Զ. Եսայեանի «Կեղծ հանճարներ» գրքի, Ստանպուլ, «Արաս» հրատ., 2019, էջ 190), իսկ Պ. Սնապյանը «քիչ մը անընմբռնելի» է համարում Չրաքյանի՝ մտավորականին ոչ հարիր արձագանքը (Տե՛ս՝ Սնապեան Պ., Վերծանումներ, Պէյրութ, 2011, էջ 29):

[4] Սուրեն Պարթևյանին «Սահակ Պարգևյան» վեպում անդրադարձել է նաև Հ. Օշականը, ով քաջածանոթ էր Եսայանի վիպագրությանը: Միևնույն անհատին տարբեր հայացքով են դիտարկում Եսայանն ու Օշականը. նրանք հակադրվում են ճշմարիտի ու կեղծի որոնման հանրանկարում. Եսայանի համար «Սուրէն ճշմարիտ արուեստագէտ մըն էր» (Եսայեան Զ., Կեղծ հանճարներ, էջ 59), այնինչ Օշականը նկատում է. «Չէր կրնար խօսիլ, գրել, առանց կեղծ ըլլալու» (Օշական Յ., Սահակ Պարգեւեան, Անթիլիաս, տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1985, էջ 14): Այսքանով հանդերձ՝ կերպարներն ունեն համընկնող գծեր. Եսայանը թռուցիկ ակնարկում է կերպարի «եւասէրի կոյր հեշտանքների» մասին, ընդգծում «զգայնասէր» էությունը, ինչը զարգացնում է Օշականը: Վերջինս իր կերպարին նույնպես համարում է «պարսաւի մեծ մասնագէտ», անգամ թռուցիկ անդրադառնում ուսանողական տարիների չքավոր առօրյային: Օշականն իր վեպում կերտում է նաև օրիորդ Երամյան-տիկին Հովնանյանի կերպարը, որի նախատիպը Զ. Եսայանն է, ակնարկում նրա և Պարգևյանի միջև եղած «սիրարկածի» մասին: Առավել հետաքրքրական է, թե ինչպիսի նրբագծեր է Օշականը վերցրել Եսայան գրողի նկարագրից իր վեպում կերպարակերտման ճանապարհին. «...Հայրենակից աղջիկ մը, Պոլսոյ թերթերուն մէջ գրական իր մուտքը ըրած, ապացոյցը տալով մեծ ընդունակութիւններու, հանրային հանգանակութեամբ ինկած Փարիզ՝ հետեւելու Սորպոնի գրականութեան դասերուն: Տաք էր ու պարզ այդ աղջիկը, քիչ մը շատ զգայուն, պոլսական փափկութեամբ ու հայու գորովով» (Նույն տեղում, էջ 135):

[5] Սարաֆեան Ն., Խոստովանութիւնը գրականութեան մէջ, «Բագին», Պէյրութ, 1973, Մարտ, թիւ 3, էջ 57:

[6] Եսայան Զ., Նամակներ, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1977, էջ 203:

Զ. Եսայանը «Կեղծ հանճարներ» վեպում խոսեց ականատեսի հայացքով, և հանգամանքը դիպուկ արձանագրել է Հ. Օշականը, որը կերպարների մեջ կեղծ հանճարներ տեսնելուց առաջ առաջնային է դարձրել նրանց՝ հալածական հայրենասերներ լինելը, ընդգծել «արեւմտեան ոստաններու ահաւոր անստուգութեան» միջավայրը, ուր «Տիկին Եսայեան *կեանքը ճանչցած է* այդ սերունդին տուայտումներուն հետ ու մէջէն»[7]:

«Կեղծ հանճարներ»-ում բոլոր կերպարները նույնն են իրենց միայնության զգացողության, մասնատվածության մեջ, կեղծ թե իրական՝ նրանք հայ ուսանողներն են, որոնց ուղիները շարունակ հատվում են ժամանակի ու տարածության մեջ, սակայն նրանց «*առանձին արձակված ձայները»* չունեն Եսայանի կողմից կարևորվող «*համերգի դաշնությունը»*:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄՏԱՎՈՐԱԿԱՆ-ՄԻՋԱՎԱՅՐ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից՝ «Պոլսական միջավայրի ազդեցությունը մտավորական կերպարների ինքնարտահայտման վրա», «Հայրենասիրությունն իբրև գաղափար և վարքագիծ», «Առաջադեմ մտավորականի սիրո ընկալումները»:

«Պոլսական միջավայրի ազդեցությունը մտավորական կերպարների ինքնարտահայտման վրա» ենթագլխում անդրադարձել ենք մտավոր բարձր կարողությունների տեր անհատի և միջավայրի փոխհարաբերությունների շուրջ գրողի ընկալումներին:

Արևմտահայ իրականության հուսալքիչ ներկան, դրանով պայմանավորված ապագայի՝ առավել մտահոգիչ տեսլականը գրողին մղեցին 1905 թվականին տպագրված «Սկյուտարի վերջալույսներ» վիպակում ցույց տալու մտավորականի՝ միջավայրից հոգու վտարումը, ինչպես նաև փակուղուց դուրս գալու ուղիների որոնումը: Վերջինս, ճիշտ է, անանուն է, բայց անհերքելի է Զ. Եսայանի հետ նույնացումը:

Վիպակում Ֆրանսիայից վերադարձած մտավորական հերոսուհին չի վարանում արձանագրել իրեն շրջապատող գեղեցկությունները, շրջապատից առնել մանկական հիշողությունների կարոտը, սակայն ինչքան ոգեշնչող են շրջապատող գեղեցկությունները, նույնքան մտահոգիչ է հասարակության զարգացածության աստիճանը, բարքերն ու սկզբունքները: Արդյունքում տրվում է «պայմանադրական սովորութիւններ»-ի բացահայտման ուղու մեկնարկը, քայլ առ քայլ ներկայացվում մտավորականի և միջավայրի բախումը: Հեղինակ-հերոսը մեկը մյուսի ետևից առաջադրում է կարևոր խնդիրներ: Ընդգծում է, որ մտավոր կյանքի ներկայացուցիչների միջավայրում բացակայում է գիտական գրագետ բանավեճը, դարասկզբին պոլսական միջավայրում չի տեսնում ժողովրդի մոտ միասնական համախմբում որևէ նպատակի շուրջ, ինչը ստիպում է գրողին գնալ ժամանակաշրջանի համար ինչ-որ տեղ ռիսկային քայլի, ահազանգել. «Ամէն

[7] Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականութեան, հտ. վեցերորդ / Արուեստագէտ սերունդ, Եղիշէ Դուրեան – Դանիէլ Վարուժան – Զապէլ Եսայեան, Պէյրութ, տպ. «Համազգային», 1968, էջ 248:

անգամ որ կրթական կամ գրական խնդիրներու վրայ վիճաբանութիւններ կ'ըլլան հրապարակաւ, կը մտածեմ. ոչ մէկուն համար վտանգ կայ. գաւազանները պարապին մէջ պիտի շարժին եւ մինակ շարժումին տգեղութիւնը պիտի մնայ մէջտեղ...»[8]: Առաջ են քաշվում կրթական բարեփոխումների շուրջ ուշագրավ դիտարկումներ. Զ. Եսայանը գիտակցում էր՝ առողջ հասարակության համար անհրաժեշտ են առողջ հոգեբանությամբ դաստիարակված երեխաներ[9], ընդգծում՝ համակերպության, աղաչանքների և նվաստության ոգին առած ժողովուրդն ունակ չէ պայծառ ապագա կերտելու: «Սկյուտարի վերջալույսներ»-ում, ի վերջո, ներկայանում է մանկական հիշողությունները սրտում պահած Եսայան գրողը, որի բերած հարցադրումները հաճախ ընդմիջվում են բնության շքեղ տեսարաններով. դա էլ նրա ներսի մտավորականին հոգևոր սնունդ տալու պահանջն է հագեցնում[10]:

Մտավոր բարձր կարողությունների տեր անհատին հակադիր արժեհամակարգ ունեցող միջավայրի թեմային գրողն անդրադառնում է «Շնորհքով մարդիկ» վիպակում, ուր պատկերում է 19-րդ դարավերջի ամիրաների կեղծ միջավայրը, փորձում որոնել իր՝ բարձր արժեհամակարգի տեր կերպարներին, պատասխանել հետևյալ հարցին՝ արդյո՞ք կարող է գիտակից, կրթված անհատը գոյատևել «շնորհքով մարդկանց» կեղծ միջավայրում և նրանց օրենքներով: Այստեղ կրկին առաջին պլան է բերվում մտավորական-միջավայր անհամապատասխանությունն ու բախումը:

Եթե Երուխանը «Ամիրային աղջիկը» վեպում պատկերեց ամիրայական տան անկումը, ընդգծեց ժառանգականորեն ամիրաներից փոխանցված «մոլությունները», ապա Զ. Եսայանը ամիրայական տան շառավիղների մեջ կերտեց մտավոր զարգացման բարձր կարողություններ ունեցողների՝ Աննիկի և Հակոբի կյանքի ողբերգական նկարագրերը, ցույց տվեց՝ կեղծ բարոյականով ապրող միջավայրում որքան հարուստ է անհատի ներաշխարհը, հակված դեպի գրականությունն ու բնությունը, այնքան սուր և ողբերգական կարող են լինել նրա կյանքի ընթացքն ու վախճանը:

«**Հայրենասիրությունն իբրև գաղափար և վարքագիծ**» ենթագլուխը նվիրված է «Հլուները և ըմբոստները», «Հոգիս աքսորյալ» վիպակներում մտավորական կերպարների հայրենասիրական մղումների քննությանը, «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպում գրողի նկարագրի բացահայտման սահմանների ընդլայնմանը:

Կահիրեում տպագրվող «Ազատ բեմ»-ում 1906 թվականին տպագրված «Հլուները և ըմբոստները» վիպակում Զ. Եսայանը ցույց տվեց, որ իր վիպագրության մեջ մտավորականը ոչ միայն կարող է նկատել միջավայրի թերությունները, այլ նաև

---

[8] Եսայեան Զ. Սկիւտարի վերջալոյսներ եւ այլ գրութիւններ (1895-1905), Իսթանպուլ, 2009, էջ 55:

[9] Դեռևս 1899 թվականին գրողն ուներ իր առաջադեմ հայացքները երեխաների կրթության և դաստիարակության շուրջ, մերժում էր բռնությունն ու կարևորում երեխաների ազատության հարցը, ընտանեկան և կրթական միջավայրի ըմբռնողական վերաբերմունքը նրանց նկատմամբ (Տե՛ս՝ Յովհաննէսեան Զ., Անձնասպան տղաքներ, «Անահիտ» հանդէս, Բարիզ, 1899, Յունուար, թիւ 3, էջ 102):

[10] Պատահական չէ, որ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը «բուժիչ դարմանումի համար» եթե առաջարկել է հաղորդվել, օրինակ, Խ. Աբովյանի ժողովրդասիրությանը, Հովի. Թումանյանի վերանորոգիչ պարզությանը, Սիմանթոյի հրաբխային ընդվզումներին, ապա Զ. Եսայանի դեպքում՝ մարդախույզ հոգեբանությանը (Գարեգին Բ Կաթողիկոս, Հայ գիրքը՝ «Սպեղանիք զօրաւորք», «Բագին», Պէյրութ, 1987, Հոկտեմբեր, թիւ 10, էջ 50):

խոսքից անցնել գործողությունների, ուղղորդել իրեն շրջապատող անձանց, դառնալ նրանց միավորողն ու առաջնորդողը: Քայլ առ քայլ կերտվեց վարժապետ Հակոբի՝ «գաղափարական մարդու պարկեշտ» [11] նկարագիրը, որն իր մտավոր զարգացածությամբ և հայրենասիրությամբ ջանաց առաջնորդել հլուներին ըմբոստացման տանող ճանապարհին:

Վիպակում պատկերվում են տրամադրություններ, որոնք չէին կարող ներկայացվել «արյունոտ սուլթան»-ի իշխանության օրոք: Զ. Եսայանն այստեղ բերում է ինքնապաշտպանության պատրաստ լինելու կոչեր, սեփական ուժերին վստահելու գաղափարախոսություն [12], ժողովրդի՝ կորստյան վտանգի առջև կանգնած լինելու ահազանգ: Վիպակն արձագանքն է 20-րդ դարասկզբին արևմտահայերի՝ հույսերով ու հուսախաբություններով լի կյանքի, ուր գրողն առաջնային է համարում միասնականության ամրապնդումը, անցյալի հիշողությունները վառ պահելու ունակությունը:

«Հայրենաբաղձությունը» յուրօրինակ արտացոլանք գտավ Զ. Եսայանի «Հոգիս աքսորյալ» վիպակում (1922), որը գրողի ստեղծագործագործության մեջ մտավորականի հոգու գեղեցիկ հայտնության փորձ է: 1915 թվականի Մեծ Եղեռնից հետո աքսորյալ էր Զ. Եսայանը բառի բուն և փոխաբերական իմաստներով: Հանգամանքը գեղարվեստական գործերում ընդգծվում էր հատկապես այն ժամանակ, երբ նա պատկերում էր իր ապրած միջավայրը, ուղին՝ որպես անդառնալի հիշողություն:

Մտավորականի ներաշխարհը սահմանադրական Թուրքիայում ներկայացնելու վստահ քայլ է Զ. Եսայանի «Հոգիս աքսորյալ» վիպակը, որտեղ սյուժետային զարգացումներն իրենց տեղն են զիջում մտավորական կնոջ՝ Էմմայի ինքնաբացահայտման և ինքնաճանաչման ուղուն: Այստեղ համամարդկայինին զուգահեռ «միամիտ» բերված պատկերներում թաքնված է ազգայինը, կան խորհրդանիշներ, կերպարներ, որոնց բացահայտմանն էլ ուղղված է աշխատանքի այս հատվածը:

Վիպակը գրված է առաջին դեմքով: «Անակնկալ կացութիւններու» երկրում նկարչուհու խոր հայացքով ներկայացվում են ժամանակի տրամադրությունների արդյունքում ձևավորված մտավորականների կերպարներ: Տեսնում ենք անհատների, որոնք լսարանին գրավելու և իրենց ստեղծածի ճշմարիտ գնահատականը տեսնելու փոխարեն սկսում են խճճվել շփոթ առօրյայում: Զ. Եսայանը ցույց է տալիս, որ քաղաքական անբարեհաջող պայմաններում ազգը տվել է ոչ միայն մտավորականների կորուստ, այլև ողջ մնացողներին էլ հետապնդել է

---

[11] Եսայեան Զ., Շնորհքով մարդիկ, Հլուները եւ ըմբոստները, Ստանպուլ, «Արաս» հրատ., 2018, էջ 184:

[12] Զ. Եսայանի կերպարը կրողն է պայքարի հետևյալ ռազմավարության. «Մեր փրկութիւնը ձեր բազուկներէն կախում ունի, բայց պէտք է խոհեմութեամբ վարուիլ...» (Նույն տեղում, էջ 60): Ազգային-ազատագրական պայքարի ճանապարհին *խոհեմությամբ* գործելու շուրջ հետաքրքրական դիտարկումներ ունի նաև Ա. Արփիարյանը «Կարմիր ժամուց» վիպակում, ուր Հայրապետ էֆենդին գալիս է հետևյալ եզրահանգման. «Մորթելու համար դանակը վզին դրուած մարդէն, իր շարժումներուն մէջ զգուշատր խոհեմութիւն կրնա՞ր պահանջուիլ» (Արփիարեան Ա., Կարմիր ժամուց, Վառնա, տպ. «Իրաւունք» լրագրոյ, 1909, էջ 94), ի վերջո նկատում. «Կը հասկնար թէ «ժողովուրդի խոհեմութիւն»ը զէնք ունենալու եւ զինավարժութեան մէջ կը կայանայ» (Նույն տեղում, էջ 102): «Կարմիր ժամուց»-ում ևս կարևորվում է վարժապետի դերը ըմբոստ տրամադրությունների ձևավորման գործում. Արփիարյանն ակնարկում է՝ վարժապետի տված գրականությամբ «ազգութեան գիտակցութիւնն էր որ կը վերածնէր» (Նույն տեղում, էջ 33):

անել «հայրենաբաղձությունը», ամբողջի մասը չկազմելու ցավը և անցյալով ապրելու ճահճացող կարոտը: Վիպակում ներկայացվում են նաև՝ ինչի կարիքն ունեին, ինչով էին փորձում սնվել և հոգեկան ուժ ստանալ արվեստագետները. նրանց ընդամենը անհաժեշտ էր ունենալ հասկացված լինելու վայրկյաններ, իրականին ձուլվելու և ամբողջական լինելու զգացում: Վիպակի ավարտն առաջին հայացքից ստեղծում է տպավորություն, որ դեռ շարունակություն պետք է ունենար. չէ՞ որ բոլորին Եսայանը թողնում է կես ճանապարհին. ընթերցողը չի էլ նկատում՝ ինչպես է նրանց կորցնում Պոլսի տենդով համակված մթնոլորտում: Հեղինակն ինքը նամակներից մեկում գրել է. «...Վերջաւորութիւնը թոյլ է. ուրիշ եւ լաւագոյն տեսիլք մը ունէի մտքիս մէջ, բայց չի կարողացայ սեւեռել»[13]: Խորը մտածելով գալիս ենք եզրահանգման, որ սյուժետային առումով սկիզբ, զարգացում և ավարտ չունեցող գործում ընդհանուրի մեջ մասնավորվել են մտավորականի կյանքից որոշակի դրվագներ, արդյունքում սերունդներին է փոխանցվել ժամանակին այնքան կարևոր «անհաղթելի տրամադրության» հիմնաքարերը:

1933 թվականին Զ. Եսայանը վերջնականապես հաստատվում է Խորհրդային Հայաստանում, երկու տարի անց տպագրում «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպը, որտեղ մեկ այլ դիտանկյունից է արտացոլվում մտավորականի «հայրենաբաղձությունը»: Այն կրում է ինքնակենսագրական վեպի ժանրին բնորոշ գծերը, գրված է վարպետ գրչով և արձագանքն է գրողի կարոտի: «Սիլիհտարի պարտեզները» վեպում Եսայանը սերունդներին փոխանցում է իր կյանքից դրվագներ՝ զուգահեռ առարկայական հենքի վրա դնելով հիշողությունները գերդաստանի, միջավայրի, բարքերի, ժողովրդի կյանքից վերցված իրադարձությունների մասին. արդյունքում աստիճանաբար կերտվում է նրա՝ հայրենիքի ճակատագրին հյուսված հոգու նկարագիրը: Եսայանն «անձնական» գրող է, երևույթը բնականաբար առավել ընդգծվում է ինքնակենսագրական վեպում, ուր հստակեցվում է՝ ինչն է առավել տպավորվել գրողի հիշողության մեջ, այնուհետև արտացոլվել արձակում: Ինքնակենսագրական վեպում հիշատակվում են Սրբուհի Տյուսաբը, Եղիշե Դուրյանը, Սիպիլը, Ինտրան (Տիրան Չրաքյան), Արշակուհի Թեոդիկը և այլք: Հեղինակը արձանագրում է Տյուսաբի այն խոսքերը, որոնք մեծ տպավորություն էին թողել իր վրա և դարձել գրական կյանքի ուղեկից. «Ինձ ըսավ, թե մեր իրականության մեջ դեռ անհանդուրժելի կը համարեն, որ կին մը հրապարակ գա և ուզե իր տեղը գրավել: Հաղթահարելու համար այդ բոլորին, պետք է միջակութենե վեր ըլլալ»[14]:

«Սիլիհտարի պարտեզներ»-ում ընդգծվում է՝ Եսայանն առավել անցյալինն է, իր հոգին դեռ դեգերում է կորսված ժամանակի մեջ, և մանկության հիշողությունների առարկայացումը վերապրումն է մայրենի տանն անցկացված օրերի. ինչքան էլ հայացքն ուղղում էր ներկա, փորձում իրեն գտնել ապագայի մեջ, միևնույն է, նրա կյանքի անբաժան ուղեկցողն էր *անբուժելի հայրենաբաղձությունը*: «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպը գրողի մեծարժեք գործն է, որը եկավ ամբողջացնելու 20-րդ դարասկզբի մտավորականի կերտվածքն ու

---

[13]«Զապէլ Եսայեանի տասնհինգ նամակ Սիմէոն Յակոբեանին», «Բագին», Պէյրութ, 1987, Յուլիս, թիւ 7, էջ 56:

[14] Եսայան Զ., Սիլիհտարի պարտեզները, Եր., «Անտարես» հրատ., 2018, էջ 150:

կրկին ապացուցելու կյանքի ու ստեղծագործության ամբողջականությունն ու փոխկապակցվածությունը:

«Առաջադեմ մտավորականի սիրո ընկալումները». Ի՞նչ է կատարվում մարդու ներաշխարհում, որն այդպես էլ անհայտ է մնում միջավայրին՝ Եսայանը բացահայտում է իր գործերում՝ առաջնային համարելով անհատի պայքարը հանուն սիրո, երջանկության, հոգեկան ներդաշնակության, հայրենիքի բարի գալիքի: Սիրո վեպը ներկայացնելու հաջողված փորձ է 1916 թ. գրված «Վերջին բաժակը» վիպակը, որն առանձին գրքով հրատարակվել է 1924 թվականին Կ. Պոլսում: Նշենք, որ Գր. Հակոբյանն այն ընդգրկել է նորավեպ-վեպ միջժանրային տիրույթում՝ համարելով «սիրո եւ ստեղծագործության համարժեքության ընձյուղում»[15]:

Վիպակի գլխավոր կերպարի՝ Ադրինեի մտածողության ակունքներում ճանաչելի է Եսայանն իր խոր մտածողությամբ, առաջադեմ գաղափարներով: Հերոսուհու միջոցով Եսայանն իր կին կերպարների նկարագրերը հարստացնում է նոր նրբերանգներով, անկեղծանում ընթերցողի առջև և փոխանցում իր համոզմունքներն ու աշխարհայացքն իրենց ներքին ձայնին անսացող անհատների կյանքի բարդ ընթացքի շուրջ: Դեպքերի զարգացման ժամանակաշրջանը 20-րդ դարասկիզբն է, միջավայրը՝ Սկյուտարը, ուր ընդգծվում է Արտաշես Հարությունյան-Զապել Եսայան հարազատ հոգիների կապի արտացոլումը [16] : Արգելված սիրո ողբերգությունն պատկերում գրողը, Ադրինեի կերպարի մոտ ներկայացնում մահվանն ընդառաջ գնալու ցանկությունը՝ նրբորեն երկխոսելով[17] Հովի. Թումանյանի «Անուշ» պոեմի հետ[18], տեսանելի դարձնում մտավորական կնոջ խոր ներաշխարհը:

---

[15] Հակոբյան Գր., Արեւմտահայ նորավեպը (1880-1910-ական թթ. ժանրի պատմությունը եւ տեսությունը), Եր., «Գիտություն» հրատ., 1996, էջ 176

[16] Զ. Եսայանը փորձում է «թաքնվել» Ադրինեի ետևում. հերոսուհին խոստովանում է, որ ինքը գրող չէ, այլ գրում է իր կյանքի վեպը և այն էլ՝ սիրած էակի համար: Ակնհայտ է՝ նույնպիսի խոստովանություն-առաջաբան տեսնում ենք վիպակից տարիներ առաջ գրված «Կեղծ հանճարները» վեպում՝ ուղղված Ա. Հարությունյանին, որը շարունակ քաջալերում էր Զ. Եսայանին, արտահայտում իր հիացմունքը նրա ստեղծագործական ձիրքի նկատմամբ: Նրանց միջև եղել է հարազատ հոգիների սերտ կապ: Հովի. Թումանյանն իր նամակներից մեկում գրել է. «Բայց ախար մարդ միշտ ունի մի քնքուշ էակի հետ գեղեցիկ, գեղարվեստական կապերով կապված լինելու կարոտը, երազային կյանքով երբեմն ապրելու տենչը» (Թումանյան Հովի., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 9, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 301): Սա մտապատկերում ունենալն առանցքային է Զ. Եսայանի վիպագրության մեջ մտավորականների սիրո զգացումները ճշգրիտ ըմբռնելու, նրանց ներքին մղումները հասկանալու համար:

[17]Այս առումով հետաքրքրական են հոգեբույժ Վ. Դավթյանի դիտարկումները: Նա Անուշի մեջ միայն սիրո ցավը չի տեսնում, այլ նաև՝ «ընդհանրապես, կյանքում իր տեղը չգտնելու, աշխարհից ճակատագրով օտարված լինելու, իր անձի որակներով շրջապատից շատ ավելի բարձր գտնվելու անձնական ողբերգության զգացումը» (Դավթյան Վ., Ինչու խելագարվեց Անուշը (Խելահեղության թումանյանական ըմբռնումը), Եր., «Աղվանք», 1994, էջ 66): Այս հոգեվիճակը բնորոշ է Եսայանի հերոսուհուն. ահա թե ինչու են մնացյալ կերպարները, և անգամ նրա սիրելին, միայն ծառայում Ադրինեի ներաշխարհի բացահայտմանը:

[18] Ջերմ էին Հովի. Թումանյանի և Զ. Եսայանի հարաբերությունները: Հրանտ Եսայանը հիշում է, որ Կովկասում Թումանյանը ընդունել է Զ. Եսայանին, օգնել նրան, իրենք հաճախ են եղել նրա հյուրընկալ հարկի ներքո (Տե՛ս՝ Եսայան Հ., Իմ մայրիկը, «Սովետական գրականություն» ամսագիր, Եր., 1978, հ. 3, էջ 86-87): Հետաքրքրական է, որ Զ. Եսայանը խոստովանել է. «...Վաղուց ծանոթ էի Թումանյանի բանաստեղծություններուն և կը սիրեի անոնք» (Եսայան Զ., Անձնական հուշեր Հովհաննես Թումանյանի մասին / «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 150), արժեքավոր է նաև Թումանյանի կարծիքը վիպակի վերաբերյալ. «Լույս էր տեսեր իմ «Վերջին բաժակը»

1920-ական թվականներին Հ. Եսայանը գրեց «Արգելքը» վիպակը, որտեղ կրկին քննության նյութ դարձրեց արգելված սերը՝ պայքարով և անսպասելի հանգրվանով: Վիպակն արժեքավոր է կերպարների խառնվածքի, հոգեբանության խոր պատկերման, մի շարք հետաքրքրաշարժ գրական առնչությունների տեսանկյունից: Եթե «Մոլորում», «Անձկության ժամեր» և «Վերջին բաժակը» գործերի շուրջ կարող ենք միանշանակ ասել, որ հեղինակի քաղաքական կողմնորոշումները չեն սպրդել վիպական սահմաններից ներս, ապա այլ է իրավիճակը «Արգելքը» վիպակի դեպքում: Այստեղ հեղինակը դարասկզբի հայ ազատական բուրժուա, «ինդէլիկենտ» Գարեգինի և հեղափոխական, ազգայինը բարձր արժեք համարող Ստեփանի նկարագրերը ողջ ընթացքում հակադրելով՝ ցույց է տվել, թե նախապես ամուսնացած տղամարդուն՝ Գարեգինին սիրահարված, միջավայրի կողմից ստեղծված խոչընդոտներից չվախեցող Սաթենիկը ինչպես է ընկրկում մի արգելքի դեմ, որը ոչ Գարեգինի կինն էր՝ Նատալիա Վասիլիևնան, ոչ նրանց տղան, ոչ էլ միջավայրը: Հեղինակը ողջ ընթացքում հասունացնում է վայրկյանը, երբ հաղթանակը պետք է տա կանոնավոր կրթություն չստացած Ստեփանին: Ընդգծվում է՝ Ստեփանն է իրական արգելքը՝ նրա խառնվածքը, անցած ուղին, գաղափարական անհատի նպատակասլաց նկարագիրը: Վիպակում ի հայտ են գալիս Շիրվանզադեի «Քաոս» վեպի հետ հետաքրքրական առնչություններ[19]:

«Արգելքը» և «Վերջին բաժակը» վիպակներում գրողը ցույց տվեց, որ մարդկայնանալու ճանապարհին էական չէ անհատի ստացած կրթությունը, գիտելիքների պաշարը, եթե նա իր առօրյայի անբաժանելի մասն է դարձնում կեղծիքն ու սուտը, անտարբերությունը: Գրողն ընդգծում է՝ կան հասարակության սահմանած օրենքներից ավելի բարձր սկզբունքներ, որոնց դեմ անկարող են պայքարել իրեն հոգեհարազատ նկարագրերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԳՐՈՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Այս գլխում փորձել ենք ընդլայնել գրողի հայրենասեր նկարագրերի ճանաչման եզրագծերը, ընդգծել կյանքի ողբերգական ընթացքն ու ըստ կարելվույն գնահատել նրա գրականությունը՝ որպես հակակշիռ հալածանքների, անարդարությունների և կեղծիքի:

1915 թ. արևմտահայության կյանքում սկսվեց ջարդերի մեծ ալիք, սպանվեցին, աքսորի ենթարկվեցին շատ հայ մտավորականներ: Կոտորածների միջով անցած հայության համար ոգևորիչ էր 1918 թ. Արևելյան Հայաստանի անկախացումը, թվում էր՝ նորանկախ պետությունը պետք է ամրացներ իր հիմքերը, իրականանար հայ ժողովրդի արդար իրավունքը սեփական հողում արարելու, զարգանալու, սակայն ժողովրդի առջև կրկին դրվեց գոյատևման հարցը, հայն արդյունքում կանգնեց ընտրության առջև: Ցեղասպանությունից մազապուրծ եղած

Բաքվում հրատարակվող «Գործ» ամսագրին մեջ և բախտը ունեցեր է Թումանյանի հավանության արժանանալու» (Նույն տեղում, էջ 168):

[19] Շիրվանզադեն ներկայացնում է 19-րդ դարի վերջը, Եսայանը՝ 20-րդ դարի սկիզբը, միջավայրն էլ նույնն է: Նկատելի են Գարեգին-Սմբատ, Սաթենիկ-Շուշանիկ, Միքայել-Ստեփան, Նատալիա Վասիլիևնա-Անտոնինա Իվանովնա կերպարների որոշ առնչություններ:

Եսայանը տեսել էր կյանքին սպառնացող վտանգը, կորցրել գրչակից ընկերներին, դարձել ծննդավայրից տարագիր: Տեսածն ու ապրածը չէին կարող հետք չթողնել ըմբռնումների վրա, ուստի նա վերարժևորեց իր գաղափարները և, ազգային-ազատագրական պայքարի կողմնակից գրողը, պայմանավորված տարածաշրջանում տիրող իրադրություններով, փոխեց իր քաղաքական կողմնորոշումները, ազգի փրկության ուղին տեսավ Խորհրդային Հայաստանում:

Ազգային-ազատագրական պայքարի կողմնակից Զ. Եսայանի քաղաքական նոր՝ խորհրդային կողմնորոշումները ընդգծվեցին «Նահանջող ուժերը» և «Բարպա Խաչիկ» վեպերում:

Շատերը չներեցին Զ. Եսայանին իր նոր քաղաքական ըմբռնումների համար, ոմանք, հակառակը, ողջունեցին: Ուշագրավ է Հ. Օշականի անկեղծ մտահոգությունը. «Արդեօք կը մե՞ղէ ան ինչ որ նախապէս նկարագիրը կազմած էր իր արուեստին. գերազանցապէս անձնական, նուրբ, խորունկ, իրաւ, ինչպէս արդէն իրականին մէջ հոգին ամէն արուեստագէտ կնոջ»[20]: Ընդգծենք՝ Զ. Եսայանը թողեց գրականություն, որտեղ երբեմն բացահայտ, առավել հաճախ՝ տողատակերում, ցույց տվեց՝ ինքը նույն Եսայանն է՝ անկախ հայրենիք ստեղծելու, միասնական ժողովուրդ տեսնելու երազով ապրող հայ կին մտավորականը:

1926 թ. առանձին գրքով տպագրվեց «Նահանջող ուժերը» վեպը: Պայմանավորված քաղաքական հարցադրումներով՝ այն արժանացավ տարամերժ գնահատականների: Վ. Նորենցը վեպն անվանեց «քաղաքական շրջադարձի նշանակալից վկայություն»[21]: Ս. Արզումանյանի դիտարկմամբ վեպն ամբողջովին ուղղված է դաշնակցական գործիչների դեմ, գրականագետն անգամ երբեմն ինքն է արտահայտում որոշակի վերաբերմունք կերպարների նկատմամբ, օրինակ. «Գրողը մերկացնում է Արշավիրի և Սամվելի խաբեպատիր գործունեությունը…»[22], սակայն խորքային քննությունը կերպարների բացահայտման ճանապարհին ի հայտ է բերում նոր նրբերանգներ:

Պատկերվող միջավայրը Թիֆլիսն է, ժամանակահատվածը՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիները, երբ պատերազմը ժողովրդին սնում էր արդարության վերականգնման հույսերով՝ Արևմտյան Հայաստանի ազատագրություն, փափագելի անկախության մեծ երազի իրականացում:

Եսայանը «Նահանջող ուժերը» վեպում փորձեց հայ ազատագրական թևի ղեկավար կազմի ներկայացմանը զուգահեռ պատկերել խորհրդային կողմնորոշում ունեցող կերպարներին, ցույց տալ իր նոր գաղափարախոսության հիմքերը: Վեպի առանցքային կերպարներից է «Թիֆլիսի մտավորական բուրժուազիայի ականավոր ներկայացուցիչ»[23] Ատոմ Հովնանյանը: Զ. Եսայանն Ատոմի կերպարին տալիս է գծեր իր էությունից՝ նրա աչքերով վերլուծելու համար իրադրությունները, հերոսների խառնվածքները: Հեղինակը փորձում է կոտրել բուրժուա-ժողովուրդ պատնեշն ու Ատոմի՝ հեղափոխականներին հարելու կողմնորոշմամբ ստեղծել նոր իրականություն, որտեղ մտավորական բուրժուան հանկարծ պետք է գիտակցի, որ

[20] Օշական Յ., «Գրականութեան համար», «Հուարթնոց» պարբերաթերթ, Փարիզ, 1930, թիւ 9, էջ 400:
[21] Վաղարշակ Ն., Հուշեր և արձագանքներ, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 400:
[22] Արզումանյան Ս., Զապել Եսայան (կյանքը և գործը), Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 229:
[23] Եսայան Զ., Երկեր, Եր., Հայպետհրատ, 1959, էջ 179:

տարիներ շարունակ օտար է եղել ժողովրդին, անսա նրա ձայնը՝ ըմբռնելով և ընդունելով հեղափոխության գաղափարախոսությունը:

Զ. Եսայանն իր տրամադրությունները փոխանցելու համար դիմում նաև Աննայի կերպարին. պատահական չէ, որ վեպում *հարվում են* Ատոմի և Աննայի մտածումները, դառնում Եսայանի խոստովանությունը. «Դեռ չէին անդրադարձած երկուքն ալ, որ իրենց բոլոր մտածումները անցյալին կպատկանեին, թե իրենք էականապես անցյալինն էին և կալանավոր՝ անոր հատուկ զայրույթներով և ատելություններով»[24]: Այս նախադասությամբ Զ. Եսայանը խարխուլ հիմքերի վրա է դրնում վեպի ամբողջ գաղափարական հենքը. մի՞թե խորհրդային կողմնորոշում ունեցող առանցքային կերպարները վստահ չէին իրենց քայլերում, մի՞թե ունեին հակադիր ներքին մղումներ: Զ. Եսայանն անգամ չի թաքցնում Աննայի և Ատոմի համակրանքն այն երիտասարդության նկատմամբ, որոնք դասալիք չէին, պատրաստակամ էին հանուն հայրենիքի ազատագրությանը կամավորագրվելու, թշնամու դեմ պայքարելու, իրենց կյանքը զոհելու: Պատահակա՞ն է, որ 1923 թ. Ս. Հակոբյանին ուղղված նամակում Զ. Եսայանը վեպի գրության շուրջ խոսելիս անկեղծանում է. «Գրեթէ ֆիզիքական յոգնութիւն կը պատճառէ ինձ եւ յաճախ գրուած էջերուն յաջողութիւնը տարակուսելի է ինծ համար»[25], նույն թվականին գրված մեկ այլ նամակում խոստովանում է, որ ինքը որդու համար *պուրժուա* է, «հին աշխարհի յատուկ սովորութիւններ եւ մտածումներ» ունի[26], դեռ ավելին, 1924 թ. գրված մեկ այլ նամակում կրկին ընդգծում. «...Իմ Հրանդս (լակոտը) կը գտնայ, որ ես ըստ էութեան պուրժուա եմ եւ իմ տէմոքրաթ համոզումներս աւելի մտածումի եւ որոշ գաղափարներու հետեւանք են, քան թէ իմ բնական հակումներուս»[27]:

Հեղափոխական թևի ներկայացուցիչների պատկերմանը զուգահեռ հեղինակը ներկայացրեց նաև հակառակ թևին հարող անձանց, որոնց մեջ առանցքային է ազատագրական թևի ղեկավար անդամ Արշավիր Տեր-Մովսիսյանը: Զ. Եսայանն ինչքան էլ ցույց է տալիս նրա՝ հանուն սեփական նպատակների իրագործման ժողովրդին կառավարելու բուռն ցանկությունը, միաժամանակ նրա միջոցով արտահայտում մտքեր, որոնց ճշմարտացի լինելը վեր է կասկածից, օրինակ. «Այդ միջոցին Արշավիր կոգեկոչեր այն հերոսները, որոնք նահատակված էին սուրբ գործին համար: Կհիշատակեր անոնք, որ երկրին մեջ ինկած էին քուրդերու և թուրքերու գնդակներեն...» [28] : Այսքանով հանդերձ փորձում է ցույց տալ՝ օգտագործվում էին հայ ժողովրդի նվիրական երազանքները մահվանն ընդառաջ տանող ճանապարհին, որտեղ նրանց սպասում էր հուսախաբություն:

Վեպում ընդգծվում է՝ Եսայանն առավել հակված էր, որ չթափվեր հայ ժողովրդի արյունը, հայ երիտասարդությունն ապրեր, հիմքեր ստեղծեր ամուր պետականության հաստատման համար: Մի՞թե նա չէր հիշում թափված արյունը, մի՞թե հոգու խորքում չուներ արդարության վերականգնման երազը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումը: Հակառակը խոստովանելու ցանկություն անգամ չունի

---

[24] Նույն տեղում, էջ 296:

[25] «Զապէլ Եսայեանի տասնհինգ նամակ Սիմէոն Յակոբեանին», «Բագին», Պէյրութ, 1987, Օգոստոս, թիւ 8, էջ 67:

[26] Տե՛ս՝ նույն տեղում, էջ 69:

[27] Նույն տեղում, էջ 75:

[28] Եսայան Զ., Երկեր, էջ 356:

Եսայանն իր վեպում, որտեղ Ատոմի կերպարի միջոցով *մատնում է* իր՝ հայրենիքի ազատագրության համար ալեկոծվող հոգին. «Անզգալաբար Ատոմ իր կարգին վարակվեցավ այդ հուզումեն: Հետզհետե սկսավ ստանալ հարգալիր կեցվածք մը: Իր ծանրախոհ դեմքին վրա, կիսախուփ աչքերը դարձան երազուն...» [29], խոստովանում՝ Կովկասյան ճակատը համալրող հայերի համար հայրենասիրության, արդարության վերականգման դրսևորում էր թշնամու դեմ պայքարի դուրս գալու անհրաժեշտության զգացումը, որը խորթ չէր և իր՝ հեղափոխությանը կողմնակից կերպարների համար. «Չէ՞ որ երբեմն հայրենասիրական ոգևորությունը ալիքի մը պես կուգար և կփշրեր նաև իրենց վարանումները: Հույսերը շատ մեծ էին և շատ գեղեցիկ, որպեսզի կարենային ամբողջապես հրաժարիլ անոնցմե»[30]:

Ի՞նչ էր անկախ Հայաստանը Զ. Եսայանի համար. այդ մասին չի հիշատակվել գրականագիտության մեջ, այնինչ նրա խոսքերն առավել քան բացահայտում են հայրենասեր հոգին. «Հայաստանի անկախության երազը, անհնարին երազն էր, որ իրականացաւ, անիկա այս դարուս ամէնէն գեղեցիկ հեքիաթներէն մէկն է, ամէնէն գեղեցիկն է նոյն իսկ, որովհետև անիկա գաղափարի մը իրականացումը և գաղափարի մը յաղթանակն է: ...Մեր ազգը միայն անկախութեան տէր դարձաւ հակառակ իր թշնամիներուն և հակառակ իր բարեկամներուն» [31]: Մի՞թե Զ. Եսայանին հեշտ էր տրվել իր երազներից հրաժարվելը, իր իսկ բնորոշմամբ՝ «Սուրբ Ազատութիւնը» [32] արդեն կորսված համարելը. պատասխանը կարելի է գտնել անգամ նրա խորհրդային կողմնորոշում պարունակող գործերում, որտեղ իրական Եսայան-մտավորականին կարելի է տեսնել տողատակերում:

«Բարպա Խաչիկ»[33]. այսպես վերնագրեց Զ. Եսայանն իր վերջին լայն կտավի գործը: Գրողը կրկին վերադարձավ անցյալ՝ գործողությունների դաշտ դարձնելով քաջածանոթ Պոլիսն ու Փարիզը: Լայն ժամանակահատված ընդգրկող (19-րդ դարի վերջ և 20-րդ դարասկիզբ) վեպում փորձեց վերանայել իր տեսածն ու նոր գաղափարախոսությանը ենթարկել կերպարների քայլերի շարժառիթները: Հր. Թամրազյանի կողմից վեպը համարվեց գրողի «աշխարհայացքի փոփոխության ցայտուն արտահայտություն»[34]:

Վեպի սյուժետային զարգացումները պտտվում են պոլսաբնակ, երկաթագործ Բարպա Խաչիկի շուրջ: Զ. Եսայանը դեպքերի զարգացումն այնպես է կառուցում, որ կերպարները ըմբռնեն՝ իրենց փրկության համար կա միայն մեկ ապաստան՝ խորհրդայնացած Հայաստանը:

Գրողը վեպի հիմնական գաղափարը փոխանցելու հանձնառությունը վստահում է Մրիրանի կերպարին, փորձում է նրա մեջ խտացնել դրական հատկանիշներ՝ արդարամտություն, կրթության հանդեպ սեր, հարգանք դիմացինի նկատմամբ՝ անկախ սոցիալական կարգավիճակից և ազգային պատկանելությունից, սակայն նրա հակասական գծերը շարունակ կասկածի տեղիք

---

[29] Նույն տեղում, էջ 349:

[30] Նույն տեղում, էջ 278:

[31] «Տիկին Զապէլ Եսայեանի ճառը», «Արեւ», Ալեքսանդրիա, 1920, 25 Փետրուար, թիւ 124(739), էջ 1:

[32] Տե՛ս՝ նույնը, «Արեւ», Ալեքսանդրիա, 1920, 27 Փետրուար, թիւ 125(740), էջ 1:

[33] «Բարպա Խաչիկ» վեպը գրողը թեև ավարտին է հասցրել 1936-ին, նույն թվականին հատվածներ տպագրել «Խորհրդային գրականություն» ամսագրի 1-4-րդ համարներում, սակայն ամբողջական տարբերակով առաջին անգամ գործը լույս է տեսել 1966 թվականին:

[34] Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, Եր., «Լույս» հրատ., 1984, էջ 426:

են տալիս՝ արդյո՞ք նման խառնվածի տեր անհատն ունակ է հիմնավորելու վեպում առաջ քաշված գաղափարների, քայլերի տրամաբանությունը:

Համալսարանական կրթություն ստանալը կարևորվում է ազգությամբ հույն բանվոր Վասիլի որդու՝ Յորկիի կերպարի դեպքում: Գրողը հետևողականորեն փորձում է Միհրանի և Յորկիի միջոցով ստեղծել կապ աշխատավորների և մտավորականների միջև:

Հեղինակն այդպես էլ չի խորացնում հետաքրքիր խառնվածք և հանձնառություն ունեցող հույն ծեր վարժապետի՝ Դասկալոսի կերպարի նկարագրի պատկերումը: «Կիսախելագար» համարվող մտավորականին է վստահված մտքեր, ինչպիսիք են. «Պետք է անողոք ըլլալ՝ պաշտպանելու համար կյանքի իրավունք ունեցողները» կամ՝ «Պետք է մեռնիլ գիտնալ՝ ապրելու իրավունք ձեռք բերելու համար,- ըսավ ան կատաղությամբ,- այս է օրենքներու օրենքը»[35]: Խոսքերը հիշեցնում են «Ավերակներուն մեջ» գրքում Շեյխ Մուրադ գյուղից իմաստուն և քաջ ծերունու հետևյալ միտքը. «Մեռնիլ չգիտցող մարդը, ապրելու արժանի չէ՞...»[36]:

Ծայրահեղ թշվառության մեջ են ներկայանում Գեղարվեստից վարժարանի ուսանող Ռահմին, քանդակագործությունն ընտրած Նահատը: Նրանց կողքին պատկերվում է նույն վարժարանի ուսանող, որոշակի կրթություն ստացած Տիրանի նկարագիրը, որի նախատիպը Զ. Եսայանի ամուսինն է: Մեծ մտավորական է եղել Տիգրան Եսայանը՝ արվեստագետի ուրույն խառնվածքով, որի խոր պատկերումն իհարկե չի եղել Եսայանի դիտակետում վեպը գրելիս: Հեղինակն ընդամենը մի քանի էջ է հատկացրել Տիրանի կերպարին, սակայն, այսքանով հանդերձ, փոխանցել է իր ջերմ վերաբերմունքը ուսումնական երիտասարդի հանդեպ, որը բավական զարգացած էր, տիրապետում էր մի շարք լեզուների, երազում կատարելագործվել նախընտրած ուղղության մեջ: Փարիզյան միջավայրում կերտվում են ուսանողների, գիտության որևէ ոլորտում մասնագիտացած անձանց անավարտ նկարագրեր: Կարելի է հանդիպել բազմաթիվ մտավորականների, որոնց կյանքի պայմանները խոչընդոտում են իրենց սիրելի մասնագիտությամբ զբաղվելուն, որոնց միավորում է իրավահավասար ապրելու բուռն ցանկությունը, նրանք երևում են ուղեկորույս նկարագրով, իրական մտավորական կոչվելու համար կիսում Եսայանի քաղաքական նոր կողմնորոշումները:

Ո՞րն է վեպի գլխավոր թերությունը. Զ. Եսայանը, ներկայացնելով 20-րդ դարասկզբի իրողությունները, չի գրում 1915 թվականին երիտթուրքերի կողմից իրականացված ցեղասպանության մասին, կտրուկ անցում է կատարում 1917-ին: Իհարկե, «Բարպա Խաչիկ» վեպը չէր կարող ազգային հարցերի բարձրացման հարթակ լինել գրողի համար, ինչն, ի դեպ, վեպի ողջ ընթացքում Զ. Եսայանը փորձում է հերքել՝ շարունակաբար կարծես ապահովագրելով իրեն: Այսքանով հանդերձ փոխանցում է իրականության ուշագրավ կողմեր. պատկերում է սեփական տունը հարկադրաբար լքած մարդկանց ողբերգությունը: Ո՞րն էր վեպը գրելու նպատակը. «Մահացու վերքեր ստացած արևմտահայ ժողովուրդի այդ բեկորները[37]

---

[35] Եսայան Զ., Բարպա Խաչիկ, Եր., «Հայաստան» հրատ., 1966, էջ 375:

[36] Նույնը, Աւերակներուն մէջ, Կ. Պոլիս, Հայոց հրատ. ընկերութիւն - թիւ 1, 1911, էջ 100:

[37] *Բեկորներ.* այսպես է նաև կոչում տարագիր հայությանը 1943 թվականին Բոստոնում հրատարակած «Նավը լեռան վրա» վեպում Կոստան Զարյանը, ով թեև հեղինակն է Զ. Եսայանին ուղղված «Ազգային «հնդկահաւուհին»» երգիծական հատվածի, 1920-ականներին նամակագրական կապի մեջ է եղել գրողի

ցրվեր էին աշխարհիս ամեն կողմերը: ...Եվ ամեն մեկը՝ ուղեկորույս և մոլորուն, նոր հայրենիք կորոներ, տեղ մը, ուր իր ներկայության հանդուրժեին, ուր կարենար պատվաստել իր զավակներու կյանքը... խզվելով հազարամյա անցյալեն, և զրկվելով որևէ հեռանկարե, այդ բեկորները կկորսնցունեին իրենց կյանքի իմաստը»[38]:

Զ. Եսայանը վեպում ներկայացնում է Բալկանյան պատերազմի արձագանքները Պոլսում, Յորկիի միջոցով ակնարկում եվրոպական հաստատությունների կողմից անտարբեր վերաբերմունքի մասին. «Եվ ասոնք մարդկության անունով կխոսին, ազատություն կըսեն, քաղաքակրթություն կըսեն, մեզի կարհամարհեն...»[39]: Բալկանյան պատերազմին Եսայանն անդրադարձել էր նաև 1912 թվականին գրված «Բավական է...» պատմվածքում, ուր ներկայացրել էր պատերազմի մեկնարկը, համապրել մարդկանց, անկախ ազգային պատկանելության, կյանքերի կորստյան ցավը: Եսայանն այստեղ ներկայացրել էր ճշմարտություններ. «...Պատիժի ժամը հնչած է. բիւրաւոր շրթներէ, սգաւոր մայրերու, որբերու տժգունած շրթներէն բարձրացած անէծքն է որ ամպի պէս կուտակուած է այս միջոցին դաժան եւ ոճրապարտներուն գլխուն. թուրքերը իրենց թափել տուած արցունքին մէջ է որ պիտի խեղդուին»[40], որոնց մասին «Բարպա Խաչիկ» վեպում լռեց: Հատկանշական է, որ այս խոսքերը գալիս են «Ավերակներուն մեջ» գրքից: Զ. Եսայանի հոգում տպավորված՝ տառապանքի միջով անցած հայ մոր խոսքերը չէին կարող այդքան հեշտությամբ մոռացության մատնվել նրա արձակում. «Երկինքը սեւցաւ ինծի համար, Սաֆիյէ՛... ըսի թուրք կնոջը երեսն ի վեր լալով. Աստուծոյ բոլոր կայծակները ձեր ոճիրները չպիտի կրնան պատժել. ո՞ր օրը և ո՞ր ժամուն ձեր քաւութեան ժամանակը հասած պիտի ըլլայ. այրիին, որբին ու մօր արցունքներու մէջ պիտի խեղդուիք...»[41]: Պատմվածքի՝ 1922 թվականին տպագրված տարբերակում գրված է ոչ թե «ոճրապարտներուն»[42], այլ՝ «ոճրապարտ ցեղին»[43]: Բառակապակցությունից հրաժարվելով՝ Զ. Եսայանը փորձել էր հնարավորին չափ հավատարիմ մնալ հոր խոսքերին. «-Աղջի՛կս, չկա գեշ ժողովուրդ այս աշխարհիս վրա: Կան գեշ մարդիկ և լավ մարդիկ»[44]: Պատմվածքում, ի վերջո, ջանացել էր խոսել մարդկայնության անունից, խոստովանել. «Կարծես դարաւոր ձայն մը

հետ, համագործակցել՝ Հայաստանում խորհրդային կարգերին ի նպաստ: «Նավը լեռան վրա» վեպում, երբ Թիֆլիսում հայ մտավորականությունը խորհում է ազգային հարցերի շուրջ, Սոլթանյանը նկատում է. «Սակայն, երբ կենտրոնաձիգ ուժը պակասում է, երբ այդ ուժը զօրեղ, միշտ նորոգւող, միշտ ստեղծագործող քաշողականութիւն չէ, երկրից դուրս քշւած բեկորները գնալով փոքրանում են, նսեմանում եւ, վերջ ի վերջոյ, փոշիանում...» (Զարեան Կ., Նաւը լերան վրայ, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 1943, էջ 160), նա անգամ նկատում է, որ գաղութում «ազգը դադարում է լինելուց, եւ նրա տեղը բռնում է մի ինչ որ ազգանմանութիւն» (Նույն տեղում): Ինչպես տեսնում ենք՝ վիպական սահմաններում նույնանում է գրողների մտահոգությունը. հավաքական կյանքի կազմակերպմանն ուղղված որոնումների մեջ են նրանք:

[38] Եսայան Զ., Բարպա Խաչիկ, էջ 589-560:

[39] Նույն տեղում, էջ 336:

[40] Նույնը, Երբ այլեւս չեն սիրեր, Կ. Պոլիս, հրատ. Հայկ Կօշկարեան գրատան, 1925, էջ 166:

[41] Նույնը, Աւերակներուն մէջ, էջ 117:

[42] Ուշագրավ է, որ նույն բնորոշումն է տվել Հ. Օշականը՝ Զ. Եսայանին վերաբերող իր դիտարկումներում. «...Պոլսոյ մէջ զարհուրանքի օրերուն, ան իր մորթին վրայ զգաց ոճրապարտ թաթը, երբ իր գին նշանակուած գլուխին համար նեղ գտաւ միլիոնոց քաղաքը» (Օշական Յ., Գրականութեան համար, «Զուարթնոց», Փարիզ, 1930, թիւ 9, էջ 400):

[43] Տե՛ս՝ Եսայեան Զ., Բաւական է..., «Արեգ», Վիեննա, 1922, Յունուար, թիւ 1, էջ 22:

[44] Նույնը, Սիլիհտարի պարտեզները, էջ 40:

մեծաբարբառ կը խօսի իմ մէջս, եւ այդ ձայնին մէջ հպարտութեամբ կը ճանչնամ իմ հայրերուս ոգին՝ խաղաղ, պայծառ ու ներողամիտ»[45]: Զ. Եսայանն այս խոսքերը գրելիս չէր էլ ենթադրում, որ խաղաղ հայ ժողովրդի արյան ծովում էին խեղդվելու բազմաթիվ անմեղ կյանքեր: Ցեղասպանությունից հետո էլ «Բարպա Խաչիկ» վեպում ներկայանալու էր նույն Եսայանն իր ներողամիտ, մարդկության ցավը ապրող և այդ ցավից տառապող խառնվածքով, որը հավատում էր. «Եթէ իրարու թշնամի ժողովուրդները գիտնային որ դժբախտութեան օրերուն մէջ նոյն կերպարանքը ունին, նոյն հոգին, նոյն հառաչանքներն են որ կ՚արձակեն, նոյն անէծքները հեծեծագին ու նոյն աղերսանքները՝ նման շեշտով ու վանկերո՜վ... թերեւս անկարելի ներդաշնակութիւնը եւ եղբայրութիւնը հնարաւոր ըլլար...»[46]:

Զ. Եսայանը, որը դեռևս 1921 թ. ընդգծում էր. «Յամենայն դէպս ես ինքզինքս կ՚զգամ ազատ եւ շղթայազերծ. ես արդէն իսկ կը մնամ մտաւորականի ճշմարիտ դերին մէջ, որուն առաջին իրաւունքը բացարձակ ազատութիւնն է»[47], խորհրդային միջավայրում՝ շղթայված գրաքննության կապանքներից, կարծես թե հերքում էր իր ապրածը, և բնական է, որ շատերը չհասկացան նրան: Առաջին հայացքից է միայն թվում, թե բեկումնային էր Զ. Եսայանի ընտրությունը: Նրա հայրենասիրությունն անհերքելի է ճշմարտության որոնման ճանապարհին, ուստի և պետք է խուսափել խիստ գնահատականներից: Նա ապրել ու ստեղծագործել է հանուն հայրենի ժողովրդի պայծառ գալիքի. հեշտ չի եղել նրա անցած ուղին, պատահական չէ, որ որդուն «կիսալուրջ» ասել է. «-Ես կյանքում շատ եմ տառապել գրականությունից...»[48]: Գրականագետ Մ. Թյոլյոլյանը «Դար մը գրականություն» գրքում չի թաքցրել իր սուբյեկտիվ մոտեցումը գրողի անձի և գործի նկատմամբ. «...Սակայն չէր անդրադառնար երբեք՝ որ իր տիպարէն մարդոց համար շատ աւելի անհանդուրժելի պայմաններ պիտի ստեղծուէին այնտեղ»[49]: Նա գրողին դուրս է թողնում «հայրենանվեր» մտավորականների շարքից: Նույնքան սուբյեկտիվ է Եսայանի ուսանողներից Վ. Առաքելյանը, երբ գրողին բնորոշում է «անսկզբունք» ու «խաբված» [50] : *Անտեսո՞ւմ են* Զ. Եսայանի թողած արժեքավոր գրական ժառանգությունն ու հայրենանվեր գործունեությունը, *մոռանո՞ւմ* նրա նկատմամբ քաղաքական հետապնդումների, ձերբակալման պատճառները: Կ. Թերզյանի «Փրկված մասունքներ» գրքում կարդում ենք. «...Հիացած և զարմացած լսում էինք նրա պատմածները, թե ինչ է ասել Չարենցին, Բակունցին, Մկրտիչ Արմենին քննադատողներին»[51]: Պաշտպանել հայ մտավորականներին և այն էլ անհատի պաշտամունքի դաժան տարիներին. մի՞թե հայրենասիրության մեծ դրսևորում չէ: Եվ ինչո՞ւ մոռանալ, որ ձերբակալման վտանգի տակ հայտնված Եսայանը նման քայլի գնացել էր և 1915 թվականին, երբ Սիամանթոյի, Վարուժանի և այլ հայ

---

[45] Նույնը, Երբ այլեւս չեն սիրեր, էջ 180:

[46] Նույն տեղում, էջ 179:

[47] Մինասեան Մ., Զապէլ Եսայեանի տասնհինգ նամակ Սիմէոն Յակոբեանին, «Բագին», Պէյրութ, 1987, Յուլիս, թիւ 7, էջ 47:

[48] Եսայան Հ., Իմ մայրիկը, «Սովետական գրականություն» ամսագիր, Եր., 1978, հ. 3, էջ 93:

[49] Թէօլէօլեան Մ., Դար մը գրականութիւն, հատոր Ա, Բ. տպագրութիւն, Պոստըն, «Ստիվըն տէյ փրես», 1977, էջ 593:

[50] Առաքելյան Վ., Հիշողություններ. Եղիշե Չարենց, Զապել Եսայան, Հակոբ Սիրունի, «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր, Եր., 2000, հ. 1-2, էջ 108:

[51] Թերզյան Կ., Փրկված մասունքներ, Եր., «Հայաստան» հրատ., 2006, էջ 72:

մտավորականների համար գնացել էր իթթիհատականների գրասենյակ, հարցումներ արել, վտանգել իր և հարազատների կյանքը[52]: Պ. Սևակը գրել է. «Չէ՞ որ հենց *կրիտիկա* բառը նշանակում է *քննադատություն* և ոչ թե *դատաքննություն*: Այս պատճառով էլ հազար անգամ իրավ էր Դոբրոլյուբովը, երբ ասում էր, որ քննադատը «առավել *դատապաշտպանն* է, քան *դատավոր*»: Բոլորս գիտենք դատավորի անունը՝ ժամանակ» [53] : Զ. Եսայանի ստեղծագործության գնահատականը տվել է ժամանակը. մեր օրերում հատկապես Եսայանի անձն ու գործը արժանանում են մեծ ուշադրության: Հանձին Զ. Եսայանի՝ մեր առջև մտավորականն է, որը գիտակցում էր սխալվելու հավանականությունը, բայց և ճամփորդում էր, բուռն մասնակցություն ցուցաբերում քաղաքական կյանքին, արտահայտում իր կողմնորոշումները, ընդունում իր սխալներն ու ճկունությամբ թեքվում այն ուղղությամբ, որտեղ, իր ըմբռնմամբ, կանչում էր իրեն հայրենի ժողովրդի խաղաղ կյանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Դրսևորման բազմաձևությամբ ուրույն կերտվածք ունի Զ. Եսայանի վիպական մտածողությունը. հիմքում ունենալով ապրած տպավորությունները նույնքան խորությամբ ընթերցողին փոխանցելու ցանկությունը՝ իր վիպագրությունը հարստացրել է հիշողությունների, զգացումների հարուստ պատկերներով, պատկերահանին հատուկ դիտողականությամբ բնության մեջ զանազանել սովորական աչքին ոչ տեսանելի գեղեցկություններ, ստեղծել մտավորականների կենդանի նկարագրեր՝ ընդգծված խառնվածքով, որոնք արտացոլանքն են *Եսայան-անհատ* ներքին ապրումների, *Եսայան-բնություն* սերտ կապի, *Եսայան-ժողովրդի ճակատագիր* փոխազդեցությունների:

2. Հեղինակը վիպագրության մեջ ուրույն տեղ է հատկացնում ուսանող մտավորականությանը, անդրադառնում փարիզյան միջավայրում նախընտրած մասնագիտությունն ընտրած անհատների կյանքի ողբերգական ընթացքին, համատարած անտարբերության մեջ որոնում մարդկայինը («Սպասման սրահին մեջ»): 20-րդ դարասկբի հայ մտավորականների (Ինտրա, Սուրեն Պարթևյան, Սիամանթո, Վահրամ Սվաճյան և այլք) այս կամ այն հատկանիշը խտացնելով՝ գրողը ստեղծում է կենդանի կերպարներ, ահազանգում՝ վտանգված էր հայ ուսանողության ապագան. հասունանում և կայանում էին կեղծ հանճարները, ընկրկում շատերի համար այդպես էլ անծանոթ մնացած իրական մտավորականները («Կեղծ հանճարներ»): Սահմանվում են մտավորականի ճշմարիտ կերտվածքի նրբերանգները. նրանք ունեն խոր ներաշխարհ, կրողն են բարձր արժեհամակարգի, անկեղծ են իրենց և հասարակության առջև, ականջալուր են սրտի ձայնին, ամուր են պահում կապը բնության հետ: Գրողը հետևողականորեն ներկայացնում է իրական արվեստագետի կյանքի խրթին ընթացքը՝ հնարավորություն տալով ընթերցողին համեմատելու և եզրակացնելու՝ բարդ է

---

[52] Տե՛ս Եսայան Հ., Իմ մայրիկը, էջ 85:

[53] Սևակ Պ., Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր 3 (Հրապարակախոսություն, քննադատություն), Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, էջ 212:

ճշմարիտ արվեստագետի ուղին, իսկ անհավասար պայքարում արդար ճանապարհով հաջողության հասնելու գրավականն անկոտրում կամք և աշխատասիրություն ունենալն է:

3. Զ. Եսայանը մտավորականի հայացքով արձանագրում է շրջապատող գեղեցկությունները, բայց և ընդվզում իրականության թերի կողմերի դեմ. արդյունքում աստիճանաբար կառուցվում է նրա՝ հայրենիքի հանդեպ սրտացավ վերաբերմունք տածող հոգու նկարագիրը («Սկյուտարի վերջալույսներ»):

«Հլուները և ըմբոստները» վիպակում գրողի կողմից քննադատվում են անմիասնականությունն ու հլությունը: Զ. Եսայանը կարողանում է պատմական իրադարձությունների թոհուբոհում ցույց տալ մարդու՝ ազատության, հավասարության, եղբայրության համար մղվող պայքարի գնալու ցանկությունը, քայլ առ քայլ պատկերում՝ ինչպիսի փորձեր էր անում «արյունոտ սուլթան» Աբդուլ Համիդ 2-րդը հայերին շարունակական կեղեքումների միջոցով հլու դարձնելու ճանապարհին: Արդյունքը՝ ցավի և տառապանքի ձայներ, ըմբոստացման փորձեր և զոհեր, իսկ որպես հակակշիռ կառավարման հրահրող քաղաքականության՝ Եսայանը դեպքերի զարգացման շղթայում արժևորում է հայ մտավորականի դերը ժողովրդի ուժերի համախմբման ու ուղղորդման գործում:

4. «Շնորհքով մարդիկ» վիպակում հակադրությունների սիրահար Զ. Եսայանը ամիրաների միջավայրը ցույց տալուն զուգահեռ կերտում է իրեն հոգեհարազատ՝ գիրքը, կրթությունն ու անկեղծությունը կարևորող կերպարների նկարագրեր, ցույց տալիս գիտակից, կրթված մարդու կյանքի ողբերգականությունը «շնորհքով մարդկանց» միջավայրում:

5. «Հոգիս աքսորյալ» վիպակն ունի ոչ միայն պատմական, այլև համամարդկային և գեղարվեստական մեծ արժեք: Այստեղ սյուժետային զարգացումներն իրենց տեղն են զիջում քաղաքական բարդ իրավիճակում իրենց գործունեությունը ծավալող մտավորական կերպարների կյանքից դրվագների պատկերմանը: Գրողը ցույց է տալիս մտավորականի դժվար ուղին քաղաքականությամբ շնչող մթնոլորտում. նրանք լսարանին գրավելու, իրենց ստեղծածի ճշմարիտ գնահատականը տեսնելու փոխարեն խճճվում են ընդհանուրի շփոթ առօրյայում: Որպես արվեստի իրական գործ ստեղծելու նախապայման՝ հեղինակն ընդգծում է հոգեկան ազատության և կաշկանդող պատյանները կոտրելու ուղին:

6. Զ. Եսայանի վիպագրության մեջ խոր ներաշխարհի պատկերմամբ առանձնակի ուսումնասիրության դաշտ են բացում կին կերպարները: «Վերջին բաժակը» վիպակում հստակեցվում են առաջադեմ մտավորականի սիրո ըմբռնումները: Բացելով կնոջ հոգու գաղտնարանները՝ Եսայանը ցույց է տալիս՝ իր ճշմարիտ մտավորականները հեռու են հասարակության կողմից գծված սահմաններին համապատասխան լինելու համար կեղծելուց, նրանք իրենց հոգու ձայնին անսացող անձինք են: «Արգելքը» վիպակում Զ. Եսայանը կնոջ սիրո վերջնական հանգրվանով ցույց է տալիս իր կողմնորոշումը. հայրենիքի փրկության գործին նվիրվելուն պատրաստ կերպարի հաղթանակը հաստատում է նրա՝ ազգայինն ամենից վեր դասող անհատ լինելու հանգամանքը: Զ. Եսայանի՝ հայ կին մտավորականի նկարագիրը, խառնվածքը, բնավորությունը, ձգտումները, հիշողության և մտածողության առանձնահատկությունները, այն է՝

ինքնակերպավորումը, բյուրեղացվում են «Սիլիհտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպում, որտեղ տեսանելի է դառնում ստեղծագործություններում արծարծված մի շարք գաղափարների, զանազան թեմատիկ ուղղվածություն ունեցող հոդվածների ակունքները:

7. Զ. Եսայանի խորհրդային կողմնորոշման պատճառ-հիմքերը մտավորական կերպարների միջոցով խտացվում են «Նահանջող ուժերը» և «Բարպա Խաչիկ» վեպերում: Հանուն ցեղասպանություն տեսած, բնաջնջման վտանգի տակ կանգնած հայության բարօրության, խաղաղ զարգացման՝ Զ. Եսայանն ըստ էության թվացյալ մոռացության է մատնում ազատասեր ժողովրդի մեծ հույսերը, երազանքները: Երկու հակադիր թևերի պայքարում հատուկենտ, բայց և դիպուկ խոստովանված ճշմարտություններով գրողը կասկածի տակ է դնում իր կողմից առաջ քաշված նոր գաղափարները, առավել ընդգծում հայ մտավորականի համար անկախության երազի զոհաբերման ողբերգականությունը:

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են հետևյալ հրապարակումներում.

1. Մտավորականության նկարագիրը Զապել Եսայանի «Հոգիս աքսորյալ» վիպակում, «Գիտական Արցախ», 2 (3), Ե., 2019, էջ 368-378:
2. Զապել Եսայանը «Մասիս»-ի էջերում (20-րդ դարի սկիզբ), Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. ընտանիք, հայրենիք, եկեղեցի: Նյութեր հայ մամուլի 225-ամյակին նվիրված գիտաժողովի (28-29 նոյեմբերի 2019 թ.), Ե., 2020, էջ 218-226:
3. Գաղափարական անհատի հայրենասեր նկարագիրը Զապել Եսայանի «Հլուները և ըմբոստները» վիպակում, «Պատմություն և քաղաքականություն», 4 (9), Ե., 2020, էջ 55-64:
4. 20-րդ դարասկզբի հայ մտավորականը Զապել Եսայանի «Սկյուտարի վերջալույսներ» վիպակում, ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», 2, Պրակ Բ, Գյումրի, 2020, էջ 22-28:
5. Մտավոր կյանքի ներկայացուցիչների նկարագիրը Զապել Եսայանի «Սպասման սրահին մեջ» վեպում, «Հայագիտական հանդես», 1 (46), Ե., 2020, էջ 77-86:
6. Տաճատ Չարըքյանի և Բարսեղ Սարգիսյանի կերպարների համեմատական բնութագիրը Զապել Եսայանի «Կեղծ հանճարներ»-ում, «Հայագիտական հանդես», 1 (50), Ե., 2021, էջ 109-122:
7. Զապէլ Եսայեան. վիպական մտածողութեան հարցեր, Կեանքը եւ վէպի ընդգրկումները. ազդեցութիւններ եւ զարգացման ուղենիշներ: Միջազգային գիտաժողովի նյութեր (27 Մայիս, 2021), Ե., «ՎՄՎ-Պրինտ», 2022, էջ 198-204:

САРГСЯН АННА МАРАТОВНА

ПОПЫТКА ХУДОЖЕСТВЕННОГО ИССЛЕДОВАНИЯ ИНТЕЛЛИГЕНЦИИ В РОМАНАХ ЗАБЕЛ ЕСАЯН

Афтореферат диссертации на соискание ученой степени кандидата Филологических наук по специальностьи 10.01.02-"Армянская литература новейшего периода".

Зашита диссертации состоится 16 июня 2023 года, в 12:30 часов на заседании специализированного совета ВАК 003 по специальностьи «Литературоведение» при Институте литературы имени М. Абегяна по адресу по адресу: г. Ереван, ул. Г. Лусаворич 15.

РЕЗЮМЕ

Армянская писательница З. Есаян творила в основном с начала 20-го века до его 30-х годов – период, который имел определяющее значение в жизни армянского народа, оставил неизгладимый след вчувствительной душе армянского интеллигента и отразился в еетворчестве.

Прозаик, считающая первостепенным представление глубоких душевных переживаний личности, в своих крупных произведениях уделила особое место образам представителей интеллигенции. Целью диссертации является выявление художественных особенностей образов интеллигентов в романах приверженной передовым идеям писательницы.

Работа состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

Во введении обосновывается выбор темы, показана степень обработанности материала, представлена актуальность и практическое значение темы, выделены цель и задачи диссертации, ее теоретико-методологические основы.

В главах диссертации мы попытались, по возможности, соблюдать хронологическую последовательность, однако, учитывая предмет нашего исследования, главным мы считали тематическое разделение.

Первая глава озаглавлена «Образ студенческой интеллигенции начала 20-го века». В этой главе мы обратились к романам «В зале ожидания» и «Фальшивые таланты», в частности, к исследованию художественных образов студенческой интеллигенции начала 20-го века, провели литературные параллели как со статьями писательницы на различные темы, так и с образами студентов, нарисованными в ее произведениях малых форм. В первом романе З. Есаян («В зале ожидания») сделана попытка рассмотреть образы студентов, оказавшихся на чужих берегах в поисках своей мечты.В романе «Фальшивые таланты» рассматриваются представители армянского студенчества, оказавшиеся в Париже, подчеркнуто, что,

в первую очередь, это художественные образы, одновременно держа в поле зрениявзаимосвязи образ – прототип (Тачат Чарекян – Тиран Чракян, Сурен Саакян – Сурен Партевян, Антон Цараян – Сиаманто.

Вторая глава озаглавлена «Попытка анализа взаимосвязей интеллигент – среда». Здесь рассматривается отображение в романах З. Есаян трагического течения жизни интеллигента, основы конфликта интеллигент – среда, отношение писательницы к образованию, воспитанию, к жизненно важным для нации вопросам («Вечерняя заря Скютари»), ее восприятие взаимоотношений между наделенной высоким интеллектомличностью и средой («Даровитые люди»), подчеркивание писательницей важной роли мыслящей личностина пути превращения покорных в бунтарей («Покорные и бунтари»). В этой главе отраженгорячий патриотизм писательницы, основания ее отторжения от настоящего и ее усилия на пути поиска возвращения ссыльной души («Моя душа в изгнании»). Расширены границы анализа образа автора в автобиографическом романе «Сады Силихтара», подчеркивая взаимосвязь с ее другими прозаическими произведениями и причины, побудившие писательницу обратиться к прошлому. Забел Есаян в сфере построения конфликта интеллигент – среда отводит особое место теме любви, где нашел свое отражение ряд образов интеллигентов, рассмотренных на примере повестей «Запрет» и «Последний стакан».

Третья глава озаглавлена «Обращение к новым политическим воззрениям писательницы». Новые политические – советские – ориентации сторонницы национально-освободительной борьбы Забел Есаян отчетливо проявились в романах «Отступающие силы» и «Барпа Хачик». Она привнесла в литературу образы интеллигентов, которые, на первый взгляд, пришли, чтоб опровергнуть прежние воззрения писательницы, а при глубоком анализе – в тайных уголках их внутреннего мира отразился образ патриотичного, свободолюбивого писателя-интеллигента. В этой главе даны контуры узнавания патриотичных образов, показано трагическое течение жизни, сделана попытка оценить по достоинству ее литературу – как противовес гонениям, несправедливости и лжи.

Романное мышление З. Есаян отличается особым многообразием проявлений: опираясь на желание передать пережитые ей самой впечатления с той же глубиной читателю, она обогатила свою прозу воспоминаниями, чувствами, со свойственной художнику наблюдательностью различала в природе не видимую обычному глазу красоту, создала живые образы интеллигентов с яркими характерами, которые являются отражением как внутренних переживаний Есаян – личности, тесной связи Есаян –природа, так и взаимовлияния Есаян – судьба народа.

ANNA MARAT SARGSYAN

ENDEAVOURING A LITERARY EXAMINATION OF INTELLIGENTSIA IN ZAPEL YESAYAN'S NOVELS

The abstract of the thesis for the scientific degree of the Candidate of Philology in the speciality 10.01.02 "The modern era of Armenian literature".

The defense of the thesis will be held on 16 June in 2023, at 12:30 a.m. at the session of the meeting of the 003 Specialized Council of Literature studies at the Institute of Literature after M. Abegyan of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia. Address: 0015, Yerevan, 15 Grigor Lusavorich str.

SUMMARY

The Armenian female writer Z. Yesayan's active career spanned mainly from the beginning of the 20th century to the 1930s, a period that was decisive in the life of the Armenian nation and left an indelible mark on the soul of this sensitive Armenian intellectual, finding reflection in her works. The novelist, who considered it of primary importance to portray deep mental and psychological states of the individual, gave a unique prominence to the portrayal of intellectual characters in her 'large canvas' works. The aim of the dissertation is to reveal the literary features of intellectual characters in the novels of this writer noted for her progressive ideas.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion and a bibliography.

The introduction presents the case for the choice of the topic, the degree of preparation of the material, the relevance and practical significance, the aim and objectives of the dissertation, the theoretical and methodological bases applied in the analysis.

In the chapters of the thesis, an attempt has been made to keep the chronological sequence intact as much as possible, however, considering the subject of our study, a thematic division has been deemed to be essential.

Chapter One is entitled "The Profile of the Student Intellectuals of the Early 20th Century." This chapter makes references to "The Waiting Room" and "Phoney Geniuses" from among the writer's novels, in particular focusing on the descriptions of the student intellectuals at the beginning of the 20th century and drawing literary parallels with the writer's articles on various topics, as well as the characters of students depicted in the 'small canvas' works. The writer's debut novel, "The Waiting Room", attempts to examine the descriptions of students who pursued their dreams on foreign shores. Her novel "Phoney Geniuses" presents an examination of Armenian students who found themselves in Paris, and although there is an emphasis on the fact that they are, first of all characters, at the same time the links to the character-prototypes are kept in perspective

(Tachat Charkian-Tiran Chrakian, Suren Sahakian-Suren Partevian, Anton Yarayan-Siamanto, etc.).

Chapter Two is entitled "Examination of Interactions between the Intelligentsia and the Environment". The chapter focuses on the depiction of the tragic course of an intellectual's life in Z. Yesayan novels, the bases of conflicts between the intelligentsia and the environment, the writer's attitude towards education, upbringing, issues of vital importance for the nation ("The Twilights of Skyutar"), her perceptions of the relationship between an individual with high intellectual abilities and the environment ("Graceful People"), the writer's emphasis on the individual with a high level of awareness in galvanising the obedient people into rebellion ("The Obedients and the Rebels"). This chapter reflects the characteristics of the author's 'nostalgia for fatherland,' the bases for the intellectuals' alienation from the present, and their efforts aimed at the return of the exiled soul ("My Soul in Exile"). The boundaries of the analysis of the writer's description in the autobiographical novel "The Gardens of Silihdar" are expanded, emphasizing the relationship with other prose works and the motivations of the writer to turn to the past.

Zapel Yesayan has given a unique prominence to the topic of love in the domain of constructing conflicts between the *intelligentsia* and the *environment* in her depictions of a number of intellectual characters as examined in her novels "The Prohibition" and "The Last Cup".

Chapter Three is entitled "Reflection of the Writer's New Political Understandings". As a supporter of the national liberation struggle, Zapel Yesayan conveyed her new political orientation linked to the Soviet rule with emphatic clarity in her novels "Retreating Forces" and "Uncle Khachik". She introduced descriptions of intellectuals to the Armenian literature, which at first glance seem to serve the purpose of rejecting the previous understandings of the writer, however upon more in-depth examination, these characters serve to reflect the profile of a patriotic, freedom-loving intellectual-writer onto the sheltered corners of their inner world. This chapter delineates the contours of patriotic descriptions, the tragic course of life, and attempts to assess her literature as a counterweight to persecutions, injustices and falsehood.

The unique structure of embedding Z. Yesayan's school of thought in her novels is reflected in the variety of employed techniques drawing strength from the writer's desire to convey the impressions she personally experienced to the reader with the same depth. This aim is achieved through augmenting the plots of novels by weaving in rich images drawn from memories and feelings. With an observant eye of an artist, the writer picks out beauty found in nature that is not visible to the ordinary eye, creating vivid descriptions of intellectuals with accentuated temperaments that are a reflection of Yesayan's experiences as an *individual*, but also showcase the close link between the writer and *nature*, and of the writer's interaction with the *nation's destiny*.